

ՍԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՒ ԴԱՍԱԳՔՐԵՐԻ ԼԵԶՈՒՆ ԵՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ¹⁾

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Մի թեթև հալեացք եթէ գցելու լինենք բաւական է որ տեսնենք թէ ինչ ծուռ ճանապարհով է գնում մեր արդի գրականական լեզվի մշակման գործը. ինչ է պատճառը ալդ տխուր երևոյթի։ Ալդ հարցին անմիջապէս պատասխանելուց առաջ մենք պիտի մի քիչ շեղվենք հետեւալ հարցին պատասխանելու համար՝ թէ ով է լեզվի մշակողը։ Մէկ անգամ արդէն ասել ենք թէ լեզվի ստեղծողը ազգն է, նորա պահողը՝ ժողովուրդը, նորա կրթողը, մշակողը՝ ուսեալ և կրթեալ հասարակութիւնը։ Բայց ունինք արդեօք ուսեալ կրթեալ հասարակութիւն. բաւի ընդհանուր մտքով—այո՛ ի հարկէ, բայց մեզ հետաքրքրող առարկայի մտքով—ոչ, հազար անգամ ոչ։ Ամեն մի ազգ (խօսքս քաղաքակրթեալ ազգերի վերաջ է) ունի մի կենտրոնական ուժ, մի ինտելլիգենտ հասարակութիւն, որի լեզուն, կրելով իւր վերաջ նոյն ազգի պատմութեան և քաղաքակրթութեան կնիքը, ներկայացնում է մի ուժ, որին հպատակվում է ամեն մի անհատը ալդ հասարակութեան. ամեն մէկը որ պատկանում է ալդ հասարակութեան, մտածում է նորա լեզվով, գրում է նորա լեզվով, խօսուս է նորա լեզուն. գրականութիւնը ցանկանալով իշխել ալդ հասարակութեան վերաջ պիտի խօսէ նորա հետ նորա լեզվով. միևնոյն ժամանակը ալդ կենտրոնական հասարակութիւնը ինքն է իւր լեզվի

¹⁾ Հանգուցեալ լեզագէտի նշանաւոր անտիպ աշխատասիրութեան՝ «Արդի գրականական լեզուն և նորա քերականութիւնը» մի գլուխն է ալս։ Վերոյիշեալ աշխատութեան ծրագիրը տպագրեց «Տարազ»-ում № 2, 1893 թ.։

Լ. ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Հանգուցեալի ալս աշխատութիւնը մենք տպագրում ենք անփոփոխ, իւր ուղղագրութեամբ։

ԾԱՆ. ԽՄԲ.

աւանդապահը նորան կերպարանք և հռչակ տվողը եթէ հարկաւորութիւն կ'ալ նորամուծութեան կամ առհասարակ մի որ և է արվեստականութեան— ալդ կատարվում է նոյն հասարակութեան թողատվութեամբ, որի լեզուն զգում է ալդ կարօտութիւնը. եթէ ալդ նորամուծութիւնը դէմ է նորա ճաշակին, նորա լեզվի ոգուն կամ հեշտ խուսափելի է—մերժվում է. եթէ ոչ հասարակութիւնը ընդունում է և իւր գործածութեամբ սրբագործում է և շատ ժամանակ տալիս է ալդ նորամուծ հիւրին իւր սեպհական կերպարանքը, ենթարկում է նորան իւր առանձնապատկութիւններին, իւր ոգուն, իբրև հաւատարիմ պահապան իւր լեզվի խտակութեանը, ոգուն և ճաշակին նա ոչ միայն անճաշակ, անպէտք և անօգուտ օտարականութիւններին իւր լեզվի մէջ մտնելու առաջն է խտտութեամբ առնում, ալ և նոյն խտտութեամբ հսկում է նա իւր լեզվի խտակութիւնը և ճաշակը ներքին թշնամիների լարձակումների դէմ. ալդ թշնամիներն են կամապակահութիւնը և գաւառականութիւնը. Ամեն մի նորահնար բառ, քերականական ձև կամ դարձված ենթարկվում է կրթեալ հասարակութեան կօնորօլին և նորա դատավճռին և միմիայն անհրաժեշտութիւնից ստիպված ինտելլիգենտ հասարակութիւնը ընդունում է ալդ նորամուծութիւնները և ալդ ալն պաշմանով, որ դա անհրաժեշտ լինելով ուրիշ տեսակ ասելը անկարելի է. և ալդ դէպքում պատահում են լաճախ օրինակներ, երբ սեպհական լեզվից կամ բարբառներից առած նորահնարը տեղի է տալիս աւելի լաջող, աւելի բովանդակութիւն, աւելի որոշ իմաստ արտապատող օտարականութեան. университетъ, факультетъ, математика և ուրիշ ալդպիսի բազմաթիւ օտար բառեր, եթէ լեզվի խտակութիւնը պաշտպանող ուռը ուզենալ թարգմանել ուռերէն խօսքերով, ոչ միայն նորան չէին հասկանալ ալ և կը լինի ալնքան ծաղրելի ինչքան երբեմն галоши-ի փոխարէն мокротыны առաջարկողները. Նոյնը կարելի է ասել և գաւառականութեան վերաբերեալ. քանի որ լուսաւոր հասարակութեան լեզուն որոշ կերպարանք է ստացել, քանի որ նորա լեզվը սովորել է ալդ լեզվին, սովորել է գղալ նորա ներդաշնակութիւնը և գեղեցկութիւնը (թող լինի պաշմանաւոր կամ ճաշակի բան—ալնուամենայնիւ սովորական և հարադատ դարձած), —ալնուհետև ամեն մի գաւառականութիւն թվում է արդէն խորթ, ծիծաղելի և ծաղրելի, թէկուզ ալդ գաւառական ձևը, խօսքը կամ դարձվածը գործածում լինի աւելի բազմաթիւ մարդկանց չլքանքան թէ ինտելլիգենտ հասարակութեան չլքանն է. Երևակայեցէք, օրինակի համար, կաֆեղրալի վերաջ նստած մի ուռս պրօֆեսոր հետեալ լեզվով դասախօսելիս. „Милостивые государи! надѣсь я вамъ говорилъ что новѣшній день я вамъ буду читать объ этомъ предметъ, но я вчераъ еще передумалъ и рѣшилъ что этотъ самый предметъ способнѣй было бы разсмотрѣть опосля, а таперица мы хотимъ потолко-

ВАТЬ СЪ ВАМИ О ДРУГОМЪ и այլն. և ոչ միայն կաֆեդրալից այլ և ընտիր հասարակութեան մէջ գործածված ալտպիսի մի լեզու կամ լուռ ժպիտով կամ գոռգոռալի ծիծաղով ու ծաղրով կը մերժեն լսողները, չը նախելով որ ամեն մէկը նոցանից գիտէ որ НАДЫСЪ, НОВАШНИЙ, ЭТОМОЪ, ВЧЕРАСЪ, СПОСОБНѢЙ (удобнѣе), ОПОСЛЯ, ТААЕРИЧА ХОЧЕМЪ գոյութիւն ունին ընդհանուր լեզվի մէջ, աւելի ժողովրդական են, որովհետեւ այդ և դոցա նման բազմաթիւ բառեր աւելի շատ դործածողներ ունին քան թէ դոցա համապատասխան գրականական ձևերը. նուցը կարելի է ասել քերականական ձևերի¹⁾ և դարձվածների վերաբերեալ: Ահա ալտպիսի կետրոնական ուժ, ալտպիսի կրթեալ հասարակութիւն է որ պակասում է մեզ. և արդարեւ ինտելլիգենտ հասարակութիւն մինք ունինք բայց որն է այդ հասարակութեան մալրենի լեզուն, որն է այն լեզուն որը նա խօսում է, որով նա մտածում է. պատասխանը պատրաստ է՝ արեւմտեան (կենտրոնի) հայերի համար տաճկերէն-ֆրանսերէնը, իսկ մեզ՝ արեւելեան հայերիս համար ռուսերէնը: Այդ երեւոյթի պատճառը հասկանալի է. ինքնուրոյն քաղաքական կեանքից և ուրեմն սեպհական միջոցներից զրկված լինելով հայերը գիտութիւն և լուսաւորութիւն ձեռք բերելու համար ստիպված են դիմելու օտար ուսումնարանների և լեզուների միջնորդութեան: Սահմանաւորենք մեր խօսքը արեւելեան հայերով: Մանկութիւնից մտնելով ռուսաց ուսումնարաններ թէ միջնակարգ թէ բարձրագոյն ուսում սաանալու նպատակով, մեր մշտական գործածական լեզուն դառնում է ռուսերէնը, որ և բնական է, քանի որ դաստանդութեան դասագրքերի և գիտութիւնների լեզուն ռուսերէնն է. բացի դորանից մենք ստիպված պիտի լաւ սովորենք և իմանանք ռուսերէնը որ մեզ աւանդածը կամ որոնած գիտութիւնները հասկանալի և մատչելի լինին մեզ: Այդ ժամանակամիջոցում և ալտպիսի հանգամանքներում մենք այն աստիճան ընտելանում ենք ռուսաց լեզվին, նորա ոգուն և դարձվածներին, որ նա դառնում է մեզ համար հարազատ լեզու, որով մենք խօսում ենք և մինչև անգամ մտածում: Առաջ նա անհրաժեշտ է լինում մեզ իբրեւ գիտութեան լեզու, լետու նորա գործածութիւնը դառնում է մեզ համար սովորութիւն և շատ անգամ էլ մնում է անհրաժեշտ այն պարզ պատճառով, որ սովոր չլինելով հայերէնին, շատ ժամանակ չ'իմանալով ամենապարզ անգամ խօսքեր կամ դարձվածները, չենք կարողանում մեր միտքը լաւ և ամբողջապէս արտայայտել և կրկին

¹⁾ Յատնի է, օրինակի համար, որ ռուսաց հասարակ ժողովրդի լեզուն համարեա քսրորովին չ'է գործ ածում причастіе и дѣеprичастіе ձևերը, ուրեմն և շատ նախադասութիւններ որոնք կրճատվում են գրականականում, կրճատելը չը գիտէ հասարակ ժողովրդի լեզուն:

դիմում ենք մեր սովորական խօսակցական լեզվին՝ ռուսերէնին, կամ թէ խօսելով հայերէն, խառնում ենք ռուսերէն խօսքեր նորա համապատասխան հայերէնը չ'իմանալով կամ իսկոյն չը գտնելով կամ որ աւելի չաճախ է պատահում՝ մտածելով ռուսերէն — թարգմանօրէն խօսում ենք հայերէն։ Բայց մեզ կարող են ասել թէ աչդ խօ բոլորեցունց չ'է վերաբերում, թէ կան բացառութիւններ. բայց մեր խօսքը բացառութիւնների վերաջ չ'է, և նոյն իսկ բացառութիւնների վերաջ մատնանիշ անելը աչսպիսի դէպքում ցոյց է տալիս գործի թույլ կողմը, աչդ ասել է թէ լեզվի ոգին, ճշդութիւնը և չափութիւնները հասկանում են միմիայն մի քանիսը. իսկ մենք խօսում ենք ընդհանրութեան վերաջ, մենք խօսում ենք աչն ընդհանուր լեզվի մասին, որ կոչվում է գրականական լեզու, որը ներկայացնում է մի ընդհանուր կապ լուսաւոր դասի անդամների մէջ, որը նոյն մտածելու և միտքը չափանելու գործիք է ամենքի համար պարտաւորեալ և ամենքի համար հարազատ և նվիրական։ Մենք աչդ պարտաւորեալ և նվիրական լեզվից բաղդի բերմամբ, ինչպէս վերև ասացի, հեռանում ենք, կամաց-կամաց օտարանում ենք և ժամանակով կրկին վերադառնալով՝ ամեն մէկը մեզանից բերում է իւր հետ մի օտարացած լեզվի ճաշակ, օտարոտի պահանջներ իւր մալերէնի գրականական լեզվի վերաբերեալ. աչս քերականական ձեւը լաւ չ'է, աչս դարձվածը անպարմար է, աչս մէկը ռուսական է, աչն մէկը ռուսերէնից հեռու է, աչս բառը հին է, աչն մէկը ռուսերէնից է թարգմանաւած և ալլն և ալլն։ Մեզ կ'ասեն թէ մեր կրթեալ հասարակութեան պատկանողները խօ բոլորն էլ ռուսաց (կամ եւրոպական) միջնակարգ և բարձրագոյն ուսումնարանների մէջ են ուսել որ օտար (ըստ մեծի մասին — ռուսերէն) լեզուների չափով չափեն հայերէնը. կան շատերը, որոնք հալոց ուսումնարաններում են ուսել հալ լեզվով և հալ դասագրքերով, դոքա խօ ընտելանում են հալոց լեզվին և նորա ոգուն։ Այն, դասաւանդութեան և դասագրքերի լեզուն հայերէն է, բայց դասախօսողների և դասագրքերի լեզուն մէկը միւսին նման չ'է. ամեն մէկը նոցանից ունի իւր համոզմունքները լեզվի վերաբերեալ, ունի իւր գաղափարները գրականական լեզվի և նորա մշակման գործի վերաբերեալ. և աչդ հասկանալի է. թէ ուսուցիչները թէ դասագրքեր կազմողները ըստ մեծի մասին նոյն մեր վերև նկարագրած հասարակութեան են պատկանում, իսկ եթէ նոցա մէջ կան աչնալիսիք, որոնք աւելի հալական ուժով են կրթեալ, նոքա իրանց լեզվի հիմն են ընդունում հին հայերէնը՝ աչդ պատճառով և հալ ուսումնարաններից էլ գուրս են գալիս մարդիկ չ'ունենալով ընդհանուր ամենքի համար հարազատ և պարտաւորեալ գրականական լեզու, մտնում են նոյն ինտելիգենտ հասարակութեան շրջանը, ամեն մէկը բերելով իւր հետ նոյն խորին համոզմունքը թէ իւր խօսած և ընդունած հայերէնը միակ ընդունելին է և կա-

Նոնաւորը: Հասկանալի է ուրեմն որ ալդ տեսակ անհատներից բաղկացած կրթեալ հասարակութիւնը չ'է կարող կատարել ալն դերը, որ կատարում է կրթեալ հասարակութիւնը ուրիշ քաղաքակիրթ ազգերի մէջ. ալդ դերն է, ինչպէս վերև ասացինք՝ հսկել նորա խտակութիւնը, կանոնաւորութիւնը ու ոգին, գորանով է կրթեալ հասարակութիւնը մասնակցում գրականական լեզվի շինութեան և մշակման գործին. նորան է պատկանում կամ ընդունելով սրբագործել կամ մերժելով խափանել ալն ինչ որ լեզվի վերաբերեալ առաջարկում են նորան նորա գրողները ու զրագէտները: Սորանից պարզ երևում է, որ իսկապէս ալս վերջիններն են լեզուն մշակողները, անմիջապէս գործողները, իսկ հասարակութիւնը, որի համար նոքա գործում են, որի լեզուն կրթում մշակում են, կատարում է դատաւճիռ դնողի դերը: Բայց քանի որ մենք չունինք կենտրոնական հասարակութիւն, որը ինքը պատմական կեանքով և իւր սեպհական հողի վերաջապրած լինելով հետը բերած հասցրած լինէր մեզ մի աւանդական լեզու, մի ընդհանուր գրականական լեզու, որ հաստատ, որոշ կերպարանք ունենար, որի օրէնքները և չատկութիւնները ամեն մի խօսողի և գրողի համար նվիրական և պարտաւորեալ լինէին, ալդ իսկ պատճառով նոր գրականական լեզվի մշակման գործի բոլոր ծանրութիւնը և պատասխանատւութիւնը ընկնում է նոյն իսկ մշակողների՝ գրականական գործիչների վերայ:

Թէ ինչ է ալդ գրականական լեզուն, ինչ պահանջ կար նորա չառաջ գալուն, ինչ տեղից նա չառաջ եկաւ ալդ մենք տեսանք վերև (անտիպ. Ման. Խմբ.), տեսանք նոյնպէս թէ ինչ ընթացք բռնեց ալդ գործը սկզբից, ինչ ճանապարհով գնաց, ինչ արգելքների պատահեց, տեսանք թէ ովքեր դուրս եկան և գործեցին ալդ մեծ ասպարէզում, ինչ մտքեր չաւտեցին և ինչպէս գործը տարան: Արդեօք ալդ ջանքերը ունեցան բարի հետևանք, հասան իրանց նպատակին: Այո, ալդ նոր գրականական լեզուն համեմատաբար կարճ ժամանակամիջոցում արդարացրեց մի՝ հանգամանքներին նախած՝ բաւականին հարուստ գրականութիւն. բայց ալդ նոր գրականական լեզուն ինքը հասնւոյցանկալի միակերպութեան ու կանոնաւորութեան, ստացաւ իւր վերջնական հաստատ և որոշ կերպարանքը և կազմակերպութիւնը թէ ոչ. գործին ուշադրութեամբ նաչելով ալդ հարցին տարաբաղդաբար բացասական պատասխան պիտի ստանանք: Ճշմարիտ է նա բաւականին մշակվեցաւ և կրթվեցաւ ալն աստիճան, որ կարող է ալժամ կըրթութեան և գրականութեան չաջող և չարմար գործիք համարվիլ, բայց աչնու ամենալնիւ, նա իւր լիակատար զարգացման դեռ չէ հասել, նա մինչև ալժամ չ'ստացաւ անգամ իւր հարազատ քերականութիւնը, իւր որոշ գոյնը և կերպարանքը. դորա պատճառը գրականական գործիչներն են, թերթեցէք ուշադրութեամբ մեր ժամանակակից գրականութեան օրգանը

—լրագիրները և ամսագիրները և դուք կը տեսնէք թէ ինչ խառնաշփոթ դրութեան մէջ է գտնվում լեզուն և նորա մշակման գործը և երբ ուշադրութեամբ դիտենք կը տեսնենք որ այդ տխուր երևոյթը՝ այդ մեծ և կարևոր գործի անկաջողութիւնը հետևանք է գլխաւորապէս հետևեալ պատճառների՝ անուշադրութեան, տգիտութեան և անդուսպ կամապահանջութեան:

Առաջին պատճառը՝ անուշադրութիւնը՝ աչքան էլ վնասակար հետևանքներ չ'ոճնի լեզվի համար. դա ինքն ըստ ինքեան բաւական մօտ է կարամզիւնի 'նշանաբանին' գրիւր ինչպէս խօսում ես. բայց ունի այնու ամենայնիւ աչն վատ հետևանքը որ հեղինակը ընկնում է իւր մաշկեմի բարբառի ազդեցութեան տակ կամ մի ուրիշ բարբառի, որին նորա լսելիքը ընտելացած է, կամ ընդհանուր խօսակցական լեզվի, որը, ինչպէս վերև ասացինք, աւանդական և կենտրոնացած չլինելով դեռ ինքը չ'ոճնի որոշ կերպարանք և խօսողի բերանում ստանում է լաճախ տեղական-գաւառական գոյն: Գաւառականութիւններից գերծ չ'են, ինչպէս տեսանք, մեր գրողներից շատերը, որոնց թւում և նոցանից մեծագոյնը—Բաֆֆին: Գաւառականութիւնը գուցէ փոքրագոյնն է չարիքներից, անուշադրութիւնից, անփութութիւնից դէպի լեզուն լառաջ են գալիս զանազան հակասութիւններ լեզվի քերականութեան մէջ և այդ պատահում ենք ոչ միայն զանազան հեղինակների լուրջածներից բաղկացած մի հրատարակութեան մէջ այլ և լաճախ միևնույն գրվածքի մէջ: Այդ հակասութիւնների անթիւ օրինակներից բերենք մի քանիսը ¹⁾. Եւ հնչւում, Եւ հետևում, Եւ կրճատւում («Մուրճ» 1889, № 1, երես 174) Եւ լուում, Եւ բարդում, Եւ արդարացնում (ibid-եր. 175), Եւ ասում, (ibid եր. 176) Եւ խաղում («Մուրճ» 1889 № 10, եր. 1497 և 1499). գործածած Եւ («Մուրճ» 1890 № 1, եր. 6). բայց՝ Եւ թողնում (№ 10, եր. 1507), Եւ տալիս (1504), Եւ կարող (1496), Եւ տրւում, Եւ բացասում, Եւ դառած («Մուրճ» 1890 № 1, եր. 6—7): Այդ՝ պ. Արասխանեանցի իրա լուրջածներից ²⁾, Նոյն հակասութիւն-

¹⁾ Բոլոր լառաջ բերած օրինակներում մենք պահում ենք քննգրի ուղղագրութիւնը: Ծանօթ. Հեղինակի:

²⁾ Իմ գրելու կանոնը կամ լուրջածի հեղինակ հանգուցեալ Սարգիս Սարգսեանը չի հասկացել և կամ հինգ տարի առաջ ես գրում էի ոչ աչն-քան որոշ կանոններով ինչպէս ալթմ: Չեմ կարող ճիշտը որոշել թէ որ թականից սկսած, բայց և աչնպէս նոր Եւ որ հետևում եմ այս կանոնին՝ գրել Եւ բալից առաջ, և գրել Եւ՝ երբ աչդ մասնիկը խօսքի (բալի, ածականի, դոականի) վերջումն է: Ես գրում եմ՝ Եւ ասում, Եւ գալիս, Եւ ներում, Եւ կարող, Եւ կարողանում, Եւ սխալելի և ալն. բայց գրում եմ՝ Նա չիւանդ Եւ, Նա ճշմարտախօս Եւ, Նա վիրաւորած Եւ, Նա դերասան Եւ, այդ նա Եւ և ալն: Համաձայն այդ կանոնին, ես գրում՝ Եւ Եւ ասողը և ալն...

ները կը տեսնէ ընթերցողը և ուրիշ հեղինակներին «Մուրճին» մէջ տպւած խօղվածներում և մի առանձին անտարբերութեան հասած՝ Նամակներում» օրինակ՝ չէ լինում և կողքին՝ չէ լինում («Մուրճ», 1890, № 1, եր. 18—19)։ չէ անում և կողքին՝ չէ անում (ibid), չէ բերում, կողքին՝ չէ հաւանում (ibid) եր. 19 չէ կարող, եր. 28 չէ կարող. բաց սա արդէն կատարեալ անտարբերութիւն է դէպի լեզվի միակերպութիւնը և ես համոզված եմ, որ Նամակները գործ է ածում երկու ձևն էլ որովհետև ժողովրդի լեզվում երկուսն էլ գործածական են—բաց զարմանում եմ որ այդ տեսակ մտածողներից ոչ մէկը չ'է փորձում փոխել նոյն էական (ոչ բացասական) ձևը ք և գրել աչնպէս ինչպէս գուցէ ինքը գրողը իրան համար աննկատելի կերպով խօսելիս գործ է ածում՝ «յ (արտաս. «) չէ (փոխանակ չ'է)» և դուրս համար խօսակցական լեզուն և բարբառները պատճառ բերողներից ոչ ոք չ'է գրում՝ ասումայ, գիտումայ, գնումայ, լսումայ և ալլն, մինչդեռ թէ կրթեալ հասարակութեան թէ առ հասարակ ժողովրդի խօսակցական լեզվի մէջ՝ առաջնում շատ չաճախ, երկրորդում համարեա մշտապէս՝ գործածական է «յ և ոչ ք, նոյն իսկ մեր արեւելեան չորս գլխաւոր բարբառներից երեքի քերականութիւնը տալիս է «յ և ոչ ք ձևը («յ—երևան, Ղարաբաղ և Ագուլիսի բարբառում, ք—մի. միայն Տփլիսի բ.)։ Լուրջ է դատում Ղ. Աղաջանցը, մի լեզվաբանական ճշմարտութիւն է չալտնում նա ասելով թէ՝ «մի ազգի գրականութեանը կարող են բառեր տալ նոյն ազգի բոլոր բարբառները, և մինչև անգամ օտար լեզուներն ևս, բաց նրա քերականութիւնը—բոլոր բարբառներից միայն մէկը կարող է տալ, վասն զի ամեն մի բարբառ ունի իր առանձին քերականութիւնը, և աչն ճիշտ և կանոնաւոր։ Որպէս զի գրական լեզուն ևս որ և է բարբառի չափ ճիշտ լինի և կանոնաւոր, եղած բարբառներից նա պէտք է միայն մէկի քերականութեան հպատակի 1)» այդ իրաւացի է, իրաւացի է և աչն որ «մեր ներկալ գրական լեզվի հարազատ

(և ոչ թէ՝ «ո չէ ասողը. չէ մասնիկը ալտեղ վերաբերում է «ո խօսքին և ոչ «ոռ խօսքին»), «ո» չէ գրում և ալլն... (не онъ пишетъ, ce n'est pas lui qui écrit.) բաց онъ не пишетъ, il n'écrit pas ես հալերէն գրում եմ աչնպէս՝ նա «ո գրում, онъ не поётъ, il ne chante pas—նա չէ երգում ևալլն, որովհետև մասնիկը բալին է պատկանում և սկզբունքն է։

Իմ կանոնը ալս է՝ երբ չեշտը մասնիկի վրան է—պէտք է գրել «ո, երբ չեշտը իրա վրայ չէ—պէտք է գրել «ո»։

Ես այդ կանոնին իմ գրածներում ամենաչն խստութեամբ հետևում եմ, եթէ գտնւին իմ գրածներում դուրս հակառակ օրինակներ՝ այդ պէտք է վերագրել անուշադիր սրբագրութեանը։

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

1) «Աղբիւր» 1888 № 12, 2 րդ բաժ. եր. 109.

մալըր Արարատեան բարբառն է ¹⁾»։ Բայց պէտք է՛է բանը չափազանցու-
թեան հասցնել թէ՛ «եթէ մի անգամ ընդմիջտ Արարատեան բարբառն
ընդունէինք մեզ համար իբրև քերականութեան հիմք, բայերն ալնպէս
խոնարհէինք, ինչպէս նոյն բարբառումն են խոնարհում, ալ ևս հարկ է՛.
ինք ունենալ հետազօտելու, ալ ուղղակի կասէինք՝ պէտք է ալնպէս
գրել, ինչպէս մեր երկօքին ոսկեղէնիկ և սրբազան մատենաներումը
գրած է ²⁾»։ Մենք համաձայն ենք որ Արարատեան բարբառը կազմում է
հիմքը մեր արդի գրականական լեզվի քերականութեան. մենք համաձայն
ենք որ ալք քերականութիւնը ձևված է ալք և ոչ ուրիշ բարբառի վե-
րալ, բայց ալնու ամենալնիւ մեր գրականական լեզվի բալերի խոնարհումը
բաւականին տարբերութիւն ունի Արարատեան բարբառի բալերի խոնար-
հումից։ Առնենք օրինակի համար երկու էական բալերը քնէ (կամ լինել) և
է՛մ. դոցանից առաջինը համարեա ամեն մի բարբառում մի առանձին
կերպարանք է ստացել, բայց ընդհանրապէս նա նոյնանման և նոյնահնչիւն
է բարբառներում ինչպէս կը տեսնենք լետու՝ բարբառների բաժնում՝ հա-
մեմատական աղիւսակից. բայց ոչ մէկը ալք բարբառներից, նոցա թվում
և Արարատեանը, է՛է ներկայացնում մեզ ալն ձևերը որ սովորական են դա-
ռած թէ կրթեալ հասարակութեան թէ գրականական լեզվի մէջ։ Ահա
Պօռնեանցի «Սօս և Վարդիթեր»-ից մի կտոր որի մէջ հանդիսանում են
ալք բալի խոնարհման մի քանի ձևերը. «Տօ դու ես ³⁾» որդի. էս վախտ
աշաբաշաւ. էդ ինչ խաբար ա, խէր ըլի էս բէվախտին։—Արի դուռը բաց
արա՛, ասեց, խէր քնէ՛ հօ հառ չպտի ւշէ, շառը շառոտ մարդին կըդիպ-
չի. Գարեգինի մէրը դրան փակը մի քիչ լիկլիկացրուց՝ քնէ՛. բալնիքը
չի գտաւ, մատը կոխեց կոտիտները բարձրացրուց ու դուռը բաց արուց»։
Նոյնը կարելի է ասել և պակասաւոր էական է՛մ բալի վերաբերեալ.
բայց սա գրականական լեզվում ալնքան է՛է հեռացել Արարատեան բար-
բառից ինչքան քնէ բալը. գրականականում նա նոյնպէս է խոնարհվում
ինչպէս Արարատեան բարբառում, բացի ներկալ ժամ. 3-րդ դէմքից եղա-
կի՛ ա (Արատ. «). ալս դէպքում ինչպէս վերև առացինք արեւելեան չորս
գլխաւոր բարբառներից երեքը մէկի (Տփիսիսի բարբառ.) դէմ համաձայն
ներկայացնում են ա և ալք երեքի թվումն է և մեր մալր բարբառը ⁴⁾։

¹⁾ Ibid, հրես 99.

²⁾ «Աղբիւր», 1888 № 12, հր. 106.

³⁾ Այս կտորը բերում ենք «Կռունկ» ամսագրից (1860 1, հր. 45)
պահանջով ուղղագրութեան հետ միասին և անմեղ ու անպէտք չեւտադրու-
թիւնը և մինչև անգամ սխալ հարցական նշանը՝ դու ես, ի տեղի՝ դու ես։

⁴⁾ Համեմատիւ է՛մ բալի ներկան.

Արարատեան	բարբ-	գրականական
եմ	ենք	եմ ենք

Արդ՝ եթէ չնաչած բարբառներն ահագին մեծամասնութեանը մենք ընդունենէ՛ք Արարատեան լինիլ (և ալդ աւելի չաճախ քան անալոգիաբար կազմված լինել) և ոչ բարբառալին ըլնէ՛լ, նոյնպէս է և ոչ այլ ինչ հիմն ունինք ուրեմն և ալն է՛ք էական բալի բացասական ձևի եղակի 3-րդ դէմքը կազմելու համար զիմել բարբառներն թէկուզ նոյն Արարատեան բարբառին, որից չ՝առանք ալդ երկու էական բալերի համար ոչ մի ուրիշ ձև ալ հաւանեցինք միմիայն ալդ չէ՛ ձևին, որը, նկատենք, աւելի պակաս չարմարութիւն ունի գրականական լեզվի մէջ մտնելուն քան թէ ընի, էլաւ, ալ և ալն. այս վերջին ձևերը գոնիա մենք չաճախ թէ գիտակցաբար թէ անգիտակցաբար գործ ենք ածում մեր սովորական խօսակցական լեզվի մէջ և քերականական տարակուսութիւններ և խառնակութիւններ չ'են չառաջանում, ալսինքն՝ միևնոյն ձևերը չ'են կրկնվում զանազան ժամանակներում. մինչդեռ չէ՛ ձևը, որը ուզում են շատերը մոցենէլ չէ՛ի փոխարէն ունի արդէն ալն անչարմարութիւնը որ կրկնվում է բացասական ապառնում. ներկալ՝ չէ՛ ասում, ապառ. չէ՛ ասիլ. իրար նման լինելով արտաքին կողմից ալդ երկու չէ՛ նմանութիւն չ'ունին իրանց ներքին նշանակութեամբ և ծագումով. դոցանից առաջինը՝ ալսինքն ներկալ ժամանակի չէ՛ն ոչ ալ ինչ է եթէ ոչ կերպարանափոխւած չէ՛ն, որը չառաջ է գալիս հետեւալ կարգով չը եմ=չ'եմ, չը ես=չ'ես չը ե=չ'է. ալս վերջին ձևը՝ բացի Տփլիսի միւս բարբառներում, նոյս թվում և Արարատեան բարբառում, փոխվում է չէ՛. ալսինքն ալս դէպքում է ենթարկվում է նոյն վիճակին ինչ վիճակին որ նա ենթարկվում է և բալերի երրորդ դէմքում եղակի (ապառ. և ստորադ. ներկալ), գիտի, գրի, քաշի, տանի և ալն. այս օրինակների մէջ ինչպէս տեսնում ենք է՛ փոխված է էից (համեմատիւ կիւրակէ=կի(ւ)րակէ). ալդպէս ահա և չէ՛ փոխվել է չէ՛. Միւս չէ՛ն ալսինքն ալն որ կազմում է բացասական ապառնու եզ. 3-դ դէմքը ուրիշ ծագում ունի. Մեր բացասական ապառնին, չընաչած իւր արտաքին պարզութեանը, շատ բարդ կերպով է կազմվել. նորա կազմողներն են՝ չէ՛ բացասական մասնիկը, էական է՛ք բալի ներկան, է՛ նախդիրը և խոնարհիող բալի աներևոյթ եղանակը. Ալդպէս է՛ անկնում և հ. Ալտընեանը ¹⁾. Թէև նորա ասածը վերաբերում է (արեւմտեան բարբառներին)

ես	էք	ես	էք
այ	են	է	են.

¹⁾ Միջին դարերու աշխարհիկ լեզուներն մէջ ոչ մակբալը գրեթէ խօսապառ վերցած է, մինչև ժԱ, ժԲ դարերու մէջ երևան կ'ելլէ նոր ձև բացասական մը՝ էական բալով և է՛ նախդրով. Զէ է հոստնէլ (չէ է հոստնէլ) չի հասներ. Զէ+ է չէն, չէինք լսեր, չէինք մտիկ ընէր. Զէ+ է հոս, չեմ ի գար. Զետու ժԳ դարու մէջ կը գտնենք հիմակուան բացասականը առանց նախդրի՝ Զէ+ վախնար. Զէ+ նախնէք:

Ներկայ ժամանակին (բացասական խոնարհման), բայց ուլ մեզանից չըզիտէ որ արեւելեան հաչերէնի Ներկայ ժամանակը կազմուած է ալնպէս ինչպէս մեր ապառնին. նորա հաստատական Ներկան մեր հաստատակաւն ապառնու պէս. միայն ալս վերջին դէպքում արեւմտեան հաչերէնում աներեւոյթ եղանակի վերջնական չ փոխուած է ը, իսկ արեւելեան հաչերէնում մնում է չ, կրելով ալնու ամենալնիւ մի ուրիշ փոփոխութիւն, ալն է՝ աներեւոյթ եղանակի ել վերջաւորութեան մէջ է փոխուած է ի: Ուրեմն մեր բացասական ապառնին, ասացինք, ունի հետեւեալ կազմութիւնը՝

...լէ+է+ հակ. բալի Ներկան+է Նախդիրը+խոնարհվող բալի աներեւոյթ եղ.:

Քննենք այդ կազմող մասերից ամեն մէկը առանձին. դոցանից առաջինը չէ ալն բացասական մասնիկն է, որ շատերը նշանակում են միմիայն չ տառով, գլխին էլ մի ապաթարց դնելով (չ'), թէն նորան կցվող բառը բաղաձայնով սկսվում լինի. թէ ինչ են ուղում չալտնել ալնպիսի մի գտակ դնելով չ ի գլխին չալտնի չէ. առանց ը գրողները անշուշտ հիմնվում են հին ուղղագրութեան վերալ, բայց դուքա մոռանում են որ ինչպէս որ ամեն մի բաղաձայն առանց ձայնաւորի կամ կիտաձայնի անարտասանելի է, ալնպէս և չ հնչիւնը առանց ը չէ արտասանվում երբ որ հանդիպում է բաղաձայնով սկսվող բառի, օր. չ գիտեմ, չ խնդրեմ և ալն (==չ գիտեմ, չը ինչդրեմ) և եթէ չեն նշանակում եղած ալն նոն ալն պատճառով ինչ պատճառով որ շատ ուրիշ դէպքերում, օր. մարդս, գլուխդ, թագաւորն և ալն. ալս օրինակներին մէջ ը շատ պարզ լսվում է, իբր ալ վանկի սղումը ալսինքն ալս==ըս, ալդ==ըդ, ալն==ըն. բայց ալնու ամենալնիւ ոչ ալս և ոչ ուրիշ նոնպէս շատ լսելի դէպքերում հնումը չ են գրում եղած, մի անգամից ընդ միշտ հասկանալի համարելով մի բառի մէջ կատարված բաղաձայնների մէջ ը-ի գոյութիւնը և աներեւոյթ ներկայութիւնը: Բայց չը պիտի մոռանանք որ մեր ալն չէն առանձին բառ է թէն նա իւր չատկութեամբ պատկանում է ալն բառերի թվին որոնք իբրև առանձին խօսքեր ինքնուրույն գործածութիւն չ'ունենալով գործ են ածվում միայն իրանց անմիջապէս հետեւող բառերին չալտնի միտք, գոն, նշանակութիւն տալու համար: Ալն տեսակ բառերը, որոնք թեքվում են դէպի իրանցից անմիջապէս չետող կանգնած բառերը, կոչվում են procliticae. ալն պրոկլիտիկաները թեքվելով դէպի իրանց հետեւող խօսքերը նշանակութեամբ

Ալն է Նախդիրն հիմալ միայն միավանկ բաղերու վրալ մնացած է. 2-ի է րու, չէ է 4-ր:

Նոն է Նախդիրն է դարձեալ սահմ. Ներկ. եղ. 3-դ դէմքի դարտութեան պատճառը. կ'ըսենք՝ կրճատմամբ՝ ինք չ լսեր, չ մնար. իբր թէ ինք չէ է լսեր, չէ է մնար. կամ իբր թէ չ'ի չսեր, չ'ի մնար: (Ալտնեան. Քննական քերական. 1866 § 239 եր. 87):

ալսինքն՝ հետեւեալ խօսքին իբր նոր միտք կամ նշանակութիւն տալու համար, կազմում են դորանով իբր թէ մի նոր բառ և այդ առաւել որ procliticaները ինքն իրանց անշեշտ լինելով (агора) կարօտութիւն են զգում աչն իրանց հետեւող բառի շեշտին: Այդտեսակ ատոններ կամ պրօկլիտիկաներ են հետեւեալ բառերը (բայ ենք թողնում լոնարէնը, ծանօթ. խմբ.) ֆրանս. le, la և ալլն. ոռւս. նախդ. сѢ, кѢ, вѢ, և ալլն. հալ. 'ի, γ, η, և ալլն և դոցա կարգին է պատկանում և լատին. non կամ ne, ֆրանս. ne (ալլ է non=ոչ), ոռւս. не (ալլ է нѣтъ=ոչ), ալղպէս է և մեր չ (ալլ է՝ ոչ): Համեմատութեան համար վերև բերած բոլոր օրինակները ինչպէս և միւսները՝ ալստեղ չը վիշածները, միանալով իրանց արտասանութեամբը իրանց հետեւող բառի հետ, աչնու ամենալցնիւ առանձին են գրվում իբրև ինքնուրոյն բառեր և միւսնոյն ժամանակը՝ միասին արտասանվելու պատճառով՝ ենթարկում են իրանց վերջնական ձայնաւորները (եթէ ի հարկէ ձայնաւորով են վերջանում) զանազան էֆմօնիկական չարմարութիւնների, օր. ոռւս. вѢ кѢ և ալլն լալնացնում են իրանց սուղը մինչև նորա համապատասխան լիահնչիւն օ՝ օրինակ во время, ко дню և ալլն կամ հանդիպելով ձայնաւորի բաց են թողնում իրանց ձայնաւորը կամ կիսաձայնը, նշանակելով այդ կրճատումը ապաթարցով օր. ֆր. la maison բալց l'arbre. je ne sai pas բալց je n'ai pas: Ալղպէս է և մեր բացասական չ, որի առանձին գրելը և աչն շ-ով և ձայնաւորի հանդիպելով ալղ շ-ի կրճատելը և ալղ ապաթարցով նշանակելը ունի մեծ անալօգիա աղգակից լեզուների մէջ. և մեր արդի գրականութիւնը լեզվի ուղղագրութեան մէջ ամենալաջողներից մէկը համարելու է:

(Վերջը չաջորդ համարում)